

Author: Anush Kocharyan
Translated by Lucille Janinyan
Poems from a poetry collection "Wild Grass"

N	Հայերեն /ARM	ENGLISH /ENG
1	<p>***</p> <p>Երեսուն տարվա երազից արթնանալը մահ-ազդ է:</p> <p>բոլորն անցան սենյակով. սենյակը ոչ ոք է: ամեն գնացողի հետ ձյուն եկավ, եւ նա, ով չանցավ, մնաց շերտի տակ:</p> <p>այստեղ, երբ հիմա եմ, կանայք են, եւ չկան մյուսները: այստեղ եւ հիմա պատերազմ է:</p>	<p>***</p> <p>to wake up from a thirty-year long dream is a death-sign.</p> <p>everyone passed through the room, the room is nobody. it snowed with everyone who left, and the one who did not - remained under the layer.</p> <p>here, when I am now, there are only women and no others. here and now is war.</p>

2	<p>վայրի խոտեր՝ լեզվիս համար (կրակոցից կես տարի անց)</p> <p>երբ մոտենամ ինձ, ու խաղաղություն լինի, գուցե ուրիշներին պատմեմ քո մասին կամ այն մասին, թե ինչպես են գիշերները վերածվում դատարկված փամփուշտների ու չստացված մահվան ուղեծրով գծում կյանքը: թե ինչպես է տրաքում լուսինը եւ ոտնահետքը, ինչպես է տեղը վայրի խոտեր աճեցնում, եւ փոքր մասշտաբներն ինչպես են խելքահան անում բոլոր նրանց, ովքեր պաշտում են իրենց ձեռքը:</p> <p>հոգիս, եթե հանկարծ այնպես լինի, որ խաղաղությունը լինի, ու ես չլինեմ, մոտեցրու ինձ վայրի խոտերին, լեզուս դիր հողին ու ձեռքդ իջեցրու հավասար, մոտ, շա՛տ մոտ տեղին, որ վայրի խոտեր է աճեցրել լեզվիս համար:</p>	<p>wild grass for my tongue <i>(half a year after the shooting)</i></p> <p>when I get close to myself and the peace exists, maybe I'll tell the rest about you or about the nights turning into empty bullets, those tracing life through a failed death. I will tell how the moon and footprints crack, by relinquishing its place to wild grass, and how the small scales make fool of those who worship their hands.</p> <p>my soul, if so it may come there exists peace but not me, bring me closer to the wild grass, put my tongue on the ground and spread your hand evenly, put closer and closer to the place, where wild grass grows for my tongue.</p>
---	--	---

<p>3</p>	<p>***</p> <p>չնահանջող մարմինները մեր, որ պատերազմի մեջ ծնվեցին, ու փոփոխությունը չեղավ, ոչինչ չունեն տալու իրենցից բացի:</p> <p>եւ հիմա, երբ սեղմում եմ մարմինը քո, հողը քաշում է ոտքերս, որովհետեւ մենք չսիրեցինք իրար, որովհետեւ կենդանի մարմինը շփոթեցինք թարգմանության հետ:</p>	<p>***</p> <p>our unrelenting bodies, born in war met no change and have nothing but themselves.</p> <p>and now when I squeeze your body the ground pulls my feet because we didn't love each other because we confused the living body with the translation.</p>
<p>4</p>	<p>պաղեստինցի պոետի մահը</p> <p>ես տեսա մի կնոջ, ով, ենթադրում եմ, չգիտեր պաղեստինցի պոետի մահը (ներիր ինձ, Ռեֆաաթ), ով աշխարհը հատուկ բառերով բնութագրելու հնարավորություն չուներ, ով լսած չկար ոչ Քամյուի «շնացողների», ոչ Մուզիլի «հետադարձերի» մասին: եւ թեպետ կինն այդ տեսել էր մարդկանց, որոնք առնվազն կրկնում են արդեն գրվածը եւ չեն տառապում, ոչ մի անգամ, ենթադրում եմ, կինն այդ ասած չկար «արդարություն» եւ «աշխարհակարգ» բառերը:</p>	<p>the Death of the Palestinian poet</p> <p>I saw a woman, who, I suppose, didn't know about the death of the Palestinian poet (I am sorry Refaat), who didn't have a possibility to describe the world with exceptional words, who never heard of Camus's "adulterers", neither of Musil's "returners". and even though that woman saw people, who repeat what has been written and don't suffer, never, I suppose, has she ever pronounced the words "justice" or "world order".</p>

<p>ես տեսել եմ այդ կնոջը վերելակում՝ մաքրուհու արտահագուստով, լազուրի կտորի մեջ կորած փոքրիկ մարմինն եմ տեսել, որ շարժվում էր խոշոր արցունքներից...</p> <p>իմ տեսած կինն այնպես էր արտասվում, ասես ճանապարհ էր դնում թռչուններին մեկընդմիջտ, ասես գիտեր, որ կա ձմեռ, որը համառելու է ու չի անցնելու, ասես չէր ուզում հավատալ, որ ինքը վկան է, ասես տեսել էր մահը Ռեֆաաթի հենց այն բառերով, որոնք հիմա շրջում են աշխարհում ուրվականի պես.</p> <p>«Եթե ես պիտի մեռնեմ, դու պիտի ապրես, որ պատմես իմ պատմությունը, որ ծախես իմ իրերը...»</p> <p><i>17.02.2024</i></p>	<p>I saw that woman in the elevator, in janitor's outwear, I saw the tiny body lost in the azure fabric trembling of heavy tears...</p> <p>the woman I saw was weeping. as if she was bidding farewell to the birds, for good, as if she knew that winter was coming to stay, as if she refused to believe, that she was a witness, as if she saw the death of Refaat in those exact words, that are spreading now in the world like ghosts:</p> <p>“If I must die, You must live To tell my story To sell my things”</p> <p><i>17.02.2024 / translated by Arevik Ashkharoyan</i></p>
--	---